

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Քաղաքացիական ավիացիայի կոմիտեն (այսուհետ՝ Կոմիտե) հայտարարում է մրցույթ՝ Կոմիտեի ենթակայության «Ավիաուսումնական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրենի թափուր պաշտոնի զբաղեցման համար:

Դիմումները ընդունվում են ամեն օր ժամը 10:00-ից 12:30-ը և 14:00-ից 17:00-ը, դիմումների ընդունման վերջին ժամկետն է՝ 2021 թ. մայիսի 14-ը:

Մրցույթը կանցկացվի Կոմիտեի շենքում՝ ք. Երևան, «Զվարթնոց» օդանավակայան, 2021 թվականի հունիսի 15-ին, ժամը 11:00-ին:

Դիմող ՀՀ քաղաքացիները պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝

- դիմում,
- անձնագիր (նույնականացման քարտ) և պատճենը,
- լուսանկար 3x4 սմ չափսի,
- քաղվածք՝ աշխատանքային գրքույկից,
- ինքնակենսագրություն,
- բարձրագույն կրթության դիպլոմ և պատճենը,
- կադրերի հաշվառման անձնական թերթիկ (լրացված),
- տեղեկանք մշտական բնակության վայրից,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթուղթ (առկայության դեպքում)։

- բնութագիր՝ վերջին աշխատավայրից (եթե կազմակերպությունը չի լուծարվել):

Մրցույթին չեն կարող մասնակցել այն անձինք, ովքեր.

- դատական կարգով ճանաչվել են անգործունակ կամ սահմանափակ գործունակ.
- տառապում են այնպիսի հիվանդությամբ, որը կարող է խոչընդոտել ծառայողական պարտականությունների կատարմանը կամ լիազորությունների իրականացմանը.
- խուսափել են ժամկետային պարտադիր զինվորական ծառայությունից.
- դատապարտվել են հանցագործության կատարման համար և դատվածությունը սահմանված կարգով հանված կամ մարված չէ.
- օրենքի համաձայն արգելվել է որոշակի պաշտոններ զբաղեցնել կամ զրկվել են որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից.
- նախորդ 3 տարվա ընթացքում եղել են սնանկանալու պատճառով լուծարված և կազմակերպության պարտատերերի օրինական պահանջները չբավարարած կազմակերպության ղեկավար:

Մրցույթին կարող են մասնակցել այն գործունակ չափահաս ՀՀ քաղաքացիները, ովքեր տիրապետում են գրական հայերենին և ունեն.

- համապատասխան բնագավառի բարձրագույն կրթություն.
- ձեռնարկատիրական կամ կառավարման ոլորտի առնվազն 3 տարվա կամ առնվազն 5 տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ.
- իր պարտականությունների կատարման համար անհրաժեշտ իրավական ակտերի իմացություն (այդ թվում՝ ՀՀ Սահմանադրություն, «Բաժնետիրական ընկերությունների մասին», «Ավիացիայի մասին» ՀՀ օրենքներ, ՀՀ աշխատանքային և քաղաքացիական օրենսգրքեր և այլ իրավական ակտեր)։
- կազմակերպության զարգացման և բարեփոխման ծրագիր (հայեցակարգ, հիմնադրույթներ) մշակելու կարողություն.

- տրամաբանելու և տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.
- ֆինանսատնտեսական գործունեության իրականացման կարողություն.
- համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն.
- աշխատանքի կազմակերպման և ղեկավարման անհրաժեշտ հմտություն.
- ենթակաների հետ վարվելու անհրաժեշտ էթիկայի կանոնների իմացություն.
- առնվազն մեկ օտար լեզվի իմացություն:

Մրցույթն անցկացվում է հարցազրույցի եղանակով:

Լրացուցիչ հարցերով դիմել (060) 43-42-61, (060) 43-42-63 հեռախոսահամարներով:

Քաղաքացիական ավիացիայի կոմիտե